


162

U. 2

Ի ՍՈՅՆԱԴԱՐԱՆԷ
ՄԷԼԿՈՆԻ ՎԱՍԻԼԻԱՆԻ
ՓԱՆՆԵՆՑ
БИБЛИОТЕКИ
Мелькона Каспаровича
ПАНИЕВА.
№ 1282

1874

1874	1874	1874	1874
1874	1874	1874	1874
1874	1874	1874	1874
1874	1874	1874	1874
1874	1874	1874	1874
1874	1874	1874	1874
1874	1874	1874	1874
1874	1874	1874	1874
1874	1874	1874	1874
1874	1874	1874	1874



ՄԱՍԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կես տարեկանը 3 ռուբլ

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Կատարեանի խանութում:

Օտարադաշտացիք դիմում են ուղղակի
Тифлис, Редакция „Маск“.

Խմբագրատանը և առաքելության 10—2 ժամ
(բացարձակ և տոմ օրերին):

Յայտարարությունները ընդունվում են ամեն լիզված

Յայտարարությունների համար վճարում են
խաբանչիկ բառից 2 կոպեկ:

Բացի «ՄԱՍԿ»-ի խմբագրատանից մեր լրագրին թիֆլիսյան բաժանորդ գրվելու ցանկացողները կարող են դիմել պ. ՄԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութին և նորակա պ. ԱՐԱՍԻԱՆՑԻ խանութին Վորոնյովի արձանի դիմաց, պ. Ա. ԽՈՋԱՄԻՐԵԱՆՑԻ:

ԲՈՒՆԱՅԻՆ ԹԻՒՆ

Ինչպես կը վարվեինք եթէ ձեր տղը լինեիրք— Դերբին տեսնեիրք: Գրաբար և աշխարհաբար: Նամակ Ախալքալաքից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսություն: Եւրոպայի քաղաքական դրությունը 1875 թվին: Նամակ Փարիզից:—Խառն լուրեր:—Յայտարարություններ:—Ֆեղիեթոն:

ԻՆՉՊԵՍ ԿԸ ՎԱՐՎԷՆԻՔ ԵԹԷ ԶԵՐ ՏԵՂԸ ԼԻՆԵՐԵ

Չորս տարի շարունակ «Մաշկ»-ը իր տուն կուն աշխատանքի համար թէ մեր հին սեւ լուսնից, թէ մեր երիտասարդ ինտելիգենցիայից որպէս վարձ ստացել է՝ բաւական հայհայանք և բաւքասանք...

Այսպէս վարձատրեցին մեզ մեր աշխատանքի համար, այսպէս զուգեց կը շարունակեն մեզ վարձատրել և ապագայում դեռ երկար ժամանակ:

ՅԷԼԻԻՏՈՆ

ԹԻՖԼԻՍԻ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐ

Թատրոն:—Օպերա:—Հայոց և վրաց ներկայացումներ:—Կոնցերտներ:—Յիթիկ:—Հաստ Դէլ-ցարացի կին:—Պանորամա:—Մօն-Պէլլի:—Գլխակաւոր պարահանդէսներ:—Կապույտ կին:—Կուրքերի ընտանեկան երեկոներ:—Հայ-օրիորդաց զարդերի խնջոյքներ:—Առաջնայ և այժմեան զուարճութիւններ:

Ոչ մի ժամանակ Թիֆլիսում եղած չին այդքան զուարճութիւններ, որքան այս տարի. Թիֆլիսցիները գործը թողած, ամեն տեսակ զուարճութիւններին հետեւեց և ընկնում:

Եթէ անկողնայաւ դիտողը կը նայէ այդ անթիւ զուարճութիւնների վրա, պէտք է կարծէ թէ Թիֆլիսը շատ հարուստ քաղաք է, որտեղ ամեն կողմից հաւաքվում են փող վաճառելու ցանկացողները: Մի և նոյն ժամանակ ինքն թիֆլիսցիներ, նայելով անթիւ զուարճութիւններին, որոնք բարեգործական նպատակով են տրվում մեր քաղաքում, կերպով մեզ բարեգործական նպատակներին հակված էակ, իր հասարակական բարեկարգութեան մասին հաղորդում են...

Բայց պէտք է խոստովանած, որ բարեգործական նպատակով տրվող զուարճութիւնները, համեմատելով անկապտակ և ոչինչ կրթողական ներգործութիւն չունեցող զուարճութիւնների հետ, շատ փոքր են թւում...

Թողնենք այդ զատուցութիւնները և նկարագրենք մի առ մի կարծիքներով մեր քաղաքի բոլոր զուարճութիւնները:

Ականջ թափ օնից: Մենք ունենք խալապական օպերա, որի ներկայացումները անցնալ տարվայ սեպտեմբերից են սկսվել և դեռ շարունակվելու են ուղիղ մի ամիս: Մեծ մասամբ մեզ կերակրեցին այդ սեպտեմբեր Վերդի, Գունիցետտի և Բելլինի օպերաներով, տեսելին Մայերբերի մի

Այդ հայհայանքների, անբաւարարութեան, մինչև անգամ կասկե կատարութեան շարժառիթը տարբեր էր հին սերունդի և երիտասարդ ինտելիգենցիայի մէջ...

Առաջինի մօտ այդ տեսակ վարմունքը մեկնվում է հրէշաւոր ինքնասիրութեան զգացմունքով (ինչպէս կարելի է որ իմաստուն և փորձված ծերութիւնը որ և է զիջումներ անէ նոր մտքերի երիտասարդ ներկայացուցիչներին և նոյն իրանից գերազանց համարէ),—երկրորդների մօտ անբաւարարութեան շարժառիթը՝ նախանձն էր...

II

Մի մարդ որ երկար ժամանակ ապրում է մեր անշարժ հասարակութեան պէս հասարակութեան մէջ, որքան և հետեւի նա զըրբերի և լրագրերի ընթերցանութեանը, նոր հասարակական մտքերի յայտնվելուն և զարգանալուն, դիտութեան վերջին հետեւանքներին,—կրկնէ կարող թէ իր մտքերի թարմութեան, թէ նոյն նորութեան, թէ վերջապէս իր հոանքի, պարզ հայեացքների, հաստատ համոզմունքների, ամեն օգտուէտ գործին ձեռք տալու ընդունակութեան կողմից համեմատվել այն անձի հետ, որ նոր է վերադարձնւ օտար, աւելի լուսաւորված երկրից...

Եթէ հին սերունդին տիրապետող ինքնասիրութեան պէս զգացմունքը, կամ նոր սեւ

րունդի մէջ տարատեսակ նախաձեռն չը կուրացնէր մեր ինտելիգենցիա անուանված հասարակութեան ողորմելի մասը,—այդ մարդիկը կը խոստովանէին մեր ասածի ճշմարտութիւնը:

III

Գատապարոված լինելով մեր երկրում տղերիւ, առանց կարողութիւն ունենալու այստեղից ժամանակ առ ժամանակ դուրս գալու, աւելի կրթված հասարակութեան մէջ վերանորոգվելու, աւելի պարզ և մաքուր օդ շնչելու,—գարձաւ փոքր ի շատէ մտաւոր զարգացման մի և նոյն մակերևոյթի վրա մեզ պահպանելու համար, մենք երբէք չարհամարհեցինք ընդունել նոր եկածներից թարմ մտքեր, նրանց լսել, նրանցից օգուտ քաղել... Այդ է պատճառը որ մենք միշտ մեծ նշանակութիւն ենք տուել արտասահմանից ստացած յօդվածներին և թղթակցութիւններին, համարելով նրանց նոր և թարմ, կենսական հոանք մեր մտաւոր գործունէութեան համար:

IV

Եւ եթէ այժմ յիտ գար մեկը պայծառ և թարմ մտքերով, հաստատ, հիմնաւոր գիտութեամբ, նոր և առաջադէմ ուղղութեամբ,—մենք ուրախութեամբ կընդունէինք նրան և եթէ տեսնէինք նրա միզ վրա գերազանցու

թիւններ անող կրտսերներ, մի և նոյն մարմնամարդական վարքութիւններ... Փոփոխութեան համար աղջկերանց տեղը պ. Գօգֆորա, ցիրկի տեղը, դուրս բերեց վերջին ժամանակ մի արջ, որ նոյնպէս ձի էր հեծնում և ձիու վրա պար էր զալիս...

Նոյն Գոգֆորան հրապարակի վրա կայ մի փոքրիկ փայտեայ շինութիւն, որտեղ իրան ցոյց է տալիս մի շվեցարացի կին իր հրէշաւոր հաստութեան համար: Նա կշռում է 400 ֆունտ և հաւատացնում է որ մինչև այժմ 25 տարեկան հասակի է...

Մի և նոյն հրապարակի վրա կայ և մի այլ փոքրիկ շինութիւն, պահ օր առ օր, որտեղ պատկերներ են ցոյց տալիս պատկերները ի հարկէ շատ նահապետական են և հարկուար է որ բացատրեն այցելողներին իրաքանչիւր պատկերը, եթէ ոչ դժուար է ճանաչել աշխարհի իր քաղաքն է, կամ պատմական իր անցքն է ցոյց տալիս պատկերը:

Թեթև և հեշտասէր ֆրանսիական և գերմանական երգեր և փոքր ի շատէ թեթև շարժումների սիրող կարող է գնալ Մօն-Պէլլի անուանված այգին, որտեղ կը գտնի երգիչների նոյն խումբը որ քանի մի ժամանակ առաջ Գերմանական կրտսեր էր ներկայացնում:

Թիֆլիսի անթիւ զուարճութիւնների թւում չէ կարելի չը յիշել և դիմաւոր պարահանդէսներ, որը անվարձ այս կամ այն կտրի անդամների համար, որը բարեգործական նպատակով, թէ կրտսերութեամբ, թէ Գերմանական կրտսերութեամբ մէջ մասնակցողները հասարակութեան բարձր կամ միջին դասին պատկանէին, միշտ միանում է... Կանայքը դիմաւորված են, իսկ պարողները ոչ: Հասկանալի է որ քաղաքը շատ մեծ չը լինելով, կանայքը գրեթէ պարողներից իւրաքանչիւրին ճանաչում են գոնէ տեսքից... և այդ վերջինները դիմաւոր են երեսների վրա չունենալով շատ հեշտ և նրանց մօտենալով, միշտ մի և նոյն, անփոփոխ խօսքերից սկսել նրանց հետ խօսակցութիւնը զի քիչ ճանաչում են...

Երեսներն հրապարակի վրա մի մեծ փայտեայ շինութեան մէջ գերմանացիների մի ընկերութիւն զետեղվել է անթիւ զազաններով: Սրանք քաղաքակրթված զազաններ են, այնպէս որ այդ

թիւնը, ուրախութեամբ կը խոստովանէինք հրապարակապէս այդ գերազանցութիւնը:

Եթէ հարկաւոր կը լինէր,—ուրախութեամբ կը թողնէինք նրան մինչև անգամ մեր ասպարէզը...

Մենք այդպէս կը վարվէինք ամեն նորերի հետ եթէ ձեր տեղը լինէինք, մենք այդպէս կը վարվէինք եթէ ձեր տեղը լինէինք 1872 թվին, երբ սկսվեցաւ մեր գործունէութիւնը...

V

Մենք այդպէս կը վարվէինք և այժմ, եթէ յիտ կը գայ մի մարդ, թարմ, նոր, առաջադէմ ուղղութեամբ... Ի հարկէ մենք այդ չենք անի եթէ փոխանակ թարմ, նոր, առաջադէմ, լուսաւոր ուղղութիւն իր հետ բերելու, որ մենք նրանից պէտք է սպասէինք, մի մարդ վերադառնալու իր հետ բերելով հասցած, կղերական, սահմանափակ, ֆեստաւար, բռնաւոր, փտած ուղղութիւն, որ ամօթ բերէր այն երկրին, որի մէջ նա ուսում է ստացել...

VI

Այո, մենք այդպէս կը վարվէինք և այժմ մի նորերի հետ, եթէ միայն կը նշարենք նրա մէջ մեզանից գերազանց քաղաքացում և ուղղութիւն...

Մենք երբէք հետեւելու չենք մեր գործունէութեան մէջ ոչ հին սերունդի հրէշաւոր ինքնասիրութեան օրինակին, որի համար

զազանանցի տեղը և նրա կինը մտնում են զազանների վանդակը, կերակրում են նրանց ձեռքից, իրանց զուլը դնում են առիւծի բերանի (որկորի) մէջ և քաղաքավար զազանները նրանց չեն ուտում...

Վերջապէս կարծես այդ բոլորը բաւական չէր. նորերում մի գերմանացի կախարհ կին էլ եկաւ մեր քաղաքը, որ հաւատացնում է թէ կարող է գուշակել իւրաքանչիւր մարդի ապագան մի մեքենայի միջոցով և ցոյց է տալիս երիտասարդներին նրանց ապագայ ամուսնու պատկերը: Այս օրերս մի թուրք եկել էր այդ կախարհի մօտ, ուղեւորվել իր կեանքի ապագան իմանալ և տեսնել իր ապագայ ամուսնու պատկերը,—յանկարծ նրան ցոյց են տալիս մի գերմանացի աղջկայ պատկերը... Թուրքը ատում է որ այդ անկարելի է, որ իր գաւառութիւնը իրան չէ թող տալիս մի օտարազգի աղջկայ հետ պսակվել... Կախարհ կինը նրան պատասխանում է որ լաւ նայէ, գոցե չարբը եւրօպական են, բայց երեսի գծացրութիւնները պէտք է որ թուրքաց աղջկայ գծագրութիւններ լինեն... Խեղճ թուրքը դուրս է եկել հայհայտիւ որ ի դուր կորցրել է այդ տեսակ բանի վրա մի թուրք...

Վերջապէս մեր զուարճութիւնների թւում չենք կարող չը յիշել և մեր կուրքերի ընտանեկան երեկոն երբ և մեր հայ օրիորդաց զարդերի մէջ տրվող խնջոյքները, որտեղ մեր ստորին և միջին դասի աղջիկները ընդունում են իրանց զատակարգից բարձր շտապութեանը, այնպիսի շտապութեան որ իրանց ընտանեկան չըլծնում գտնելու չեն, որքանի ապագայում պէտք է զօգոտութիւն զգան իրանց զուարթեան մէջ...

Ահա մեր կրթողական զուարճութիւնների մեծ մասը...

Կար ժամանակ երբ Թիֆլիսի ստորին դասի տղամարդը բացի գինի խմելուց և ժուշի կոլու անկողն ուրիշ զուարճութիւն չունէր,—այն զուարճութիւնները կամ զուլին էին կոտորում, կամ առողջութեանն էին վնասում... Այժմեան զուարճութիւնները մեծ մասը աւելում են նրա սիրտը և զրպանը և փչացնում են նրան բարոյապէս...

Ահա առաջադիմութիւն...

Ասիացի

վրա առ հասարակ, այլ և հասարակութիւն պիտի կազմեն, որ իսկապէս զպրօքն հոգին է. Պրօֆէ-սորները յարաբերութիւնը աշակերտներին հետ միշտ վարժապետական չը պիտի լինի. Մի խօսքով ճե-մարանի ուսուցիչները ազդող ու շատ հմուտ մար-դիկ պէտք է լինեն. ձշմարիտ որ, Աստուած կա-րողութիւն տայ այդ պարսններին:

Ի զէպ, վարժապետները վրա խօսեցի որ միտքս եկաւ. Աստուած են ճեմարանի վարժութիւնը ֆրան-սերէն լեզուի դաստառութեան համար հրաւիրում է ֆարիզից մի ֆրանսիացու, որ իհարկէ հայերէն չը գիտէ, Թէ որքան ծիծաղելի հետեանք պիտի ունենայ այս ֆրանսիացի պարսնի պաշտօնը՝ կար-ծեմ երեկային էլ հասկանալին է. Երեկայեցեք մի չինացի որ չինական լեզուն կամենում է հաս-կացնել ձեզ չինարէնով. իս դարձանում եմ ճե-մարանի վարժութեան պղպղիւր օտարօտի վար-մունքը վրա: Միթէ մի մարդ չը կայ այնտեղ որ հասկացնէ այդ անհերքելի սխալը: Զարմանալի բան:

Այս միջանի խօսքերով ոչ թէ ես կամեցայ ցոյց տալ ինչպէս բարձր զպրօքն կանոնադրութեան ու պրօքրամի սխալ յօդուածները, այլ միայն մի հա-յեացք գցել ճեմարանի ընդհանուր կազմակերպու-թեան վրա հասարակական կէտից: Եւ ինչ որ անյարմար ու անճշտն է հասարակութեան վե-րաբերութեամբ, նոյնն է և եթէ գուշեք, մանկա-վարժութեան վերաբերութեամբ:

Պատմութիւնը ցոյց է տալիս, որ կաթոլիկու-թիւնը մի ժամանակ անշուշտ հարկաւոր էր հա-սարակութեան համար, բայց յետոյ ոչ. իսկ այժմ ամեն առողջապատ համոզուած է և փորձերի էլ վկայում են, որ ժամանակակից հասարակութեան և ողջ գլխաւոր թշնամին նա է:

Գուցէ էջմիածնի ճեմարանը մեծ բան անէր միջին դարերում, երբ որ մտաւոր և բարոյական կատարելա անկումը թագաւորում էր հայոց մէջ և երբ որ հայ հասարակութեան պահանջները ուրիշ տեսակ էին. իսկ այժմ՝ տառնութիւններով դարձու վերջերում, մեր հասարակութեան պահանջ-մունքները ոչ թէ միջին դարերի նման էլ չեն, այլ բոլորովին փոխուել են:

Վերջացնելով նամակս ցանկանում եմ յաջո-ղութիւն ճեմարանի համար պատրաստուող ուսու-ցիչներին, մանաւանդ նոցա, որոնք պարագում են Տեսական, Գործնական, Բարոյական և Բարձրա-տական Աստուածաբանութեամբ:

Յարոյ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Փարիզից՝ «Եւսուժ» որ մի հայ եպիսկոպոս և մի աշխարհական պարոն հե-ռանալով Ս. Էջմիածնից գնացել են Հ.Ո.Ս. և այնտեղ հրատարակել են գրութիւններ Ս. Էջ-միածնի միաբանութեան և հոգեօրականների դէմ: Ասում են որ Հ.Ո.Ս.ը նրանք ընտրել են որպէս մի ազատ քաղաք... Եթէ վատիկանի սօտ են ընկալվում, ապա օգ է որ կը ծծեն նրանք այնտեղ...

Այսօր, հինգշաբթի օրը վրաց թատրոնաւոր-ները, պ. Չմիկանի մասնակցութեամբ կը ներկա-յացնեն թիֆլիսի թատրոնում վրացերէն լեզուով Գ. Սուրբաբեկեանի «Ելի մէկ գոն» կոմիկիայ, թարգմանութիւն Տէր-Դանիէլ Երաւիանցի:

Մեզ գրում են Ստրասբուրգից որ զեկ-անմբերի 1-ին կատարվեցաւ այդտեղ մի օրա-կան ժողովրդագրութիւնը. Նոյեմբերի վերջին օրերին ուղարկվեցան պոլիցիայից հաշիւթղթեր, որոնց մէջ յիշված հարցերին պիտի պատասխա-նեն տրվելին և զեկանմբերի 1-ին թէ պոլիցիայի պաշտօնականներ թէ կամաւոր հաշիւողներ տե-նից տուն մանգալով հաւաքում էին հաշիւթղթերը: Եթէ հարկաւոր էր, մասնաւոր հարցեր էին առա-ջարկում քննիչներին: Մի խօսքով եղանակը նոյն է, ինչ որ թիֆլիսում էլ պիտի գործ դրվի. Բոլոր հաշիւումակները ոչ թէ միայն Ստրաս-բուրգից, բայց և ամբողջ Գերմանիայից ուղարկ-վեցան Բեռլին Statistisches Bureau անունա-ված հիմնարկութիւնը, որ բոլոր հաւաքված տե-ղեկութիւնները պիտի մշակվեն:

Փարիզից մեզ հաղորդում են զեկանմբերի 22-ից հետեւումը՝ «Ֆրանսիայի եղուխտ-կաթօւի-կական համալսարանները բաղաւորապէս շատ աջողակ կերպով չեն առաջանում: Անցեալ օրը նոցա ֆարիզի համալսարանում սկսվել էին դա-սաստութիւնները: Կարանում ոչ ոք չէ եղել, այնպէս որ եղուխտ վարժապետները ստիպվել են իրանց սեմինարիայի աշակերտներին տանել այն-տեղ, որպէս զի լսողներ լինեն, որովհետեւ ուսա-նողներ չը կային: Եւ այդ լսողներն էլ ինչ լսող-ներ էին՝ խեղճ, խելքով ճնշված, ողորմելի սեմի-նարիսանք...»

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Է Ն Ն Ե Ր

Վ. Ինձակախաղ ԲԱՐՁՐԱԳՈՅԻ Թոյլ տուած Լոտարէյի յօդուած

ԲԱՐՅԳՈՐԾԱԿԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ Հիմնարկութիւններին

Վովկասում և Լնդօնի վաստում,

որը գտնվում են ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ Մեծ Իշխանուհի ՕԼԳԱ ՖԵՕԴՈՐՈՎՆԱՅԻ

Հովանաւորութեան տակ,

ՆԵԱՆԱԿՎՈՒՄ Է

Իսրիկինդան շարթին՝ հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին, այսինքն 12, 13 և 14

փետրվարի 1876 թ. առաւօտեան ժամը 11-ից սկսած,

Թիֆլիսում, Մեծ Իշխանուհի ՕԼԳԱ ՖԵՕԴՈՐՈՎՆԱՅԻ Թիֆլիսեան իգական Գիմնազիայի շէնութեան մէջ:

Հիմնարկութիւններ և անձինք, որը բարհաճիլ են մասնակցել Լոտարէյի տոմսակներին ծախվելուն և որը մինչև այժմ չեն ներկայացրել այդ մասին իրաւասար հաշիւ և տրամուղ լիւթում են տրամի համար յետաձգութեան պատճառ, հրաւիրում են հասցնել յիշեալ հա-շիւները Լոտարէյի մասնաժողովը, փետրվարի 1-ից ոչ աւելի ուշ:

Իսկ տոմսակները, որը անվաճառ մնացին, կարելի է ստանալ մինչև տիրութի օրը, միայն հանդիսուժ:

Տիրութի (վճակախաղի) և հետեւալ օրերը, անձինք, որը տարած կը լինեն առտրիւ-ներ, կարող են ստանալ այդ աւարկանները հանդիսից, հէնց որ կը ներկայացնեն Լոտարէյի տոմսակը:

1 (3)

Մի կտակի կամենում է պարապիլ դա-ստաւութիւնով կամ դասերի կրկնութիւնով: Պայմաններն մասին կարելի է իմանալ Վ. ար-դանիանցի գրասենում, Վոլկի կամուրջի վերա: 1 (3)

Магазинъ серебряныхъ вещей «Крис-тофия» перенесенъ съ Солодакской улицы съ 3-го января 1876-го на Гановскую улицу въ домъ Бебутова, вышю Коммерческаго Банка. И вновь полученъ большой ассорти-ментъ разныхъ серебряныхъ вещей. 1 (3) Е. ГЕЙМАННЪ.

Հրատարակեցաւ ՚ի Մոսկուա ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՑ ԷԶՄԻԱՄԻՆ Ի Սիմեոնի միջ յՅովհաննէս Բ. Եւր Տեսան 1763—1831.

Գրեալ ՚ի Մսիւրայ Մազիսարոսէ Մսե-րիանց Օմբաւոցայ: Մոսկուա, 1876: 8 ծալ. 325 երես: Հարգութիւն Օտարկայ Մսիւրիանց: Գրին հանդերձ առաքմամբ 2 ռ. արծ. կանխիկ վճարելի:

Հանկուցողն ստանալ զայս գիրը պարտն զիմէլ առ Հրատարակիչն ՚ի Մոսկուա պսո-հասցելու. Въ Москву, близъ Мещиковой башни, домъ Милованова, Заржайру Мсе-риандца. 1 (2)



Հաղաւոր անձինքնորից երկու սեռի իրանց գեղեցիկ մազերով պարտական են միայն արտասանմանում վա-ճառվող այնպէս անուանված ԲՈՒՍՈՒԿԱՆ ԽԵՆՕԳԻՆ-ՑԵՒԻՆԻ ՊՈՍՏԱԿԱՆՆԵՐ, որ մազերը բուսնիլ է տալիս: Այդ պօմաղը բժշկական շատ հեղինակու-թիւններէ փորձված է և ունի վկայական թղթ-թեր պ. կիւրիսկուց որ վիեննայի Լանդզերիխտի քի-միայի պրօֆէսոր է և նոյնպէս Մոսկուայի բժշկական վարչութեան թուղթով: Նա ունէր մեծ աջողու-թիւն և վերջին ժամանակ հետազոտած էր Մոսկուայի բժշկական վարչութեանից որ տուեց նրան իր հաւանու-թիւնը: Կանոնաւոր գործածութեան ժամանակ, մինչև անգամ մազերից մերկ զլուխները ծածկվում են մազերով: Այդ պօմաղը պնդացնում է կաշին, պահպանում է մազերը թափվելուց, մազերին տա-լիս է քնական տեղը և փայլունութիւն և իր անուշահոտութեան պատճառով, որ նրա լաւ յատկու-թիւններից մինն է, կարող է զարդարել ամենաչեղ տուալէտի սեղանը: Այդ բոլոր յատկութիւնները իմ արդիւնքի, իրաւունք են տալիս ինձ յուսալ Ռուսաստանումն էլ նրա ընդարձակ տարածման և պատուելի հասարակութիւնից լաւ ընդունելութեան վրա:



ԳԻՄԵՆ ՄԻ ԸԻՇԻ ԼԵՍԵՐ 2 ԲՈՒՐԻ

Իւրաքանչիւր չին հետ տրվում է և պօմաղի գործածութեան նկարագրութիւնը:

ՊՈՍՏԱԿ

«PASTA EUGENIE»

Այդ պօմաղի հնարող տի-կինը որ յայտնվեցաւ «Pasta» անունով, պատիւ ունի յայտնել յարգոյ հասարակութեան որ «Pasta Eugénie» այժմ ստաց-ված է և ծախվում է Թիֆ-լիսում պ. ԼԱՆԿՈՒ Մոսկու-կային մազաղիւնում: Արժուճու-տանը, վ. լազդիկ 4 ասոճ պ. ՍԵՂԱԼԻ մօտ, իսկ Մոսկու-րապօլում պ. ԿՈՒՐԻՆԻ-ՉԵՆԿՈՒ մօտ, որտեղ ծախ-վում են և մնացած այստեղ յիշված արդիւնքները: Այդ պօմաղը նշանաւոր է նորանով, որ նրա գործածութեան կարճ ժամանակից յետոյ երեսը իս-տակվում է զանազան բիծերից:



անմաքրութիւններից և խոցե-րից և ստանում է երեսասար-դական հասակին յատուկ թար-մութիւնը և գեղեցկութիւնը: Առաջարկվում է այն անձանց որը կամենում են խոտակ և սպիտակ երեսի գոյնը ստանալ: Հնարողը երաշխաւոր է պօ-մաղի ներգործութեան հաս-տատութեան համար: Գրաւա-կան կարող են լինել առողջների համար և այն վկայաթղթերը որը ստացված են թէ վիեն-նայի քիմիքոս պրօֆէսոր պ. կիւրիսկուց, թէ Մոսկուայի բժշկական վարչութեան թուղ-տութիւնը:

ՄԻ ՍՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 1 Բ. 60 Կ.

Որի հետ տրվում է և նրա գործածութեան նկարագրութիւնը:

Իւրաքանչիւր սրուակի վրա ինչպէս մա-ղերի համար, այնպէս «Pasta» գտնվում է մի առանձին դրօշմ ՎՄՈՒՐԻ պատկերով և հնարողի ստո-րագրութեամբ: Որի վրա առ-նողներին խնդ-րում ենք ու-շադրութիւն զարձնել:

ՉԵՆՈՒՐԻՐԻ

Այդ պօմաղը այնպէս է պատ-րաստված, որ նրա գործածութեանից յետոյ ձեռքերը ստանում են զարմա-



Յ. Գ. «Pasta» պօմաղը առաջարկվում է և նոցա, որը թէ և չունեն զանազան վիր-նիշված կաշու հիւսնագրութիւններ, բայց կա-մենում են ունենալ խոտակ և թարմ երեսի, վրի և ձեռքերի գոյնը:



ՊՈՍԵԼԻՐ

Նալի փափկութիւն և սպիտակու-թիւն:

Սրուակի գինը 1 Բ. 30 Կօպ.

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԸ, թէ մոյլ խարտեալ, թէ սե, որ ներկում է 10 րօպէի միջոցում և չէ կորցնում իր տեղութիւնը 6 շաբաթվայ ընթացքում: Արկիւրի 3 րօպ: ՏՕԿԱՅԵԱՆ ԲԱԼԱՍՄ, հաստատ միջոց կոյտերի և կաշու կոյտութիւնների դէմ: Սրուակը 60 Կ.:

1 (50)

ОБЪ ИЗДАНИИ ВЪ 1876 ГОДУ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“.

Съ 1-го января будущаго 1876 года „ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“ будетъ из-даваться ЕЖЕДНЕВНО, въ прежнемъ направленіи и съ участіемъ нѣнѣшнихъ со-трудниковъ газеты.

Вслѣдствіи увеличенія числа нумеровъ газеты, подписная цѣна на „Тифлисскій Вѣстникъ“ нѣсколько подымается. Годовая подписка опредѣляется: безъ доставки въ 10 руб. сер.; съ доставкою на домъ въ Тифлисѣ 11 руб.; съ почтовою пересылкою: во всѣхъ мѣстности имперіи въ 12 руб., а во всѣхъ государства „Всѣобщаго почтоваго союза“ 16 руб. сер. Полугодовая, третная и т. д. подписка на газету опредѣляется слѣдующимъ образомъ:

С Р О К И.	Безъ достав-ки.		Съ достав-кою въ Тифлисѣ.		Съ ПЕРЕСЫЛКОЮ.	
	РУБ.	К.	РУБ.	К.	По имен-ріи.	По почто-вому союзу
На 12 мѣсяцевъ	10	—	11	—	12	16
На 6 мѣсяцевъ	5	50	6	—	6	50
На 4 мѣсяца	3	50	4	—	4	50
На 3 мѣсяца	3	—	3	50	4	—
На 1 мѣсяць	1	—	1	25	1	50

Для лицъ, подписывающихся на годовое изданіе, допускается разсрочка во взносѣ годовой платы, по соглашенію съ администраціею газеты. Для служащихъ такая-же раз-срочка дѣлается чрезъ ихъ казначеевъ.

1 (2)